



Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային

կենտրոնի տնօրեն

Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 թ.

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի բաժինը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է 2019-2020 թթ. առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Արդյունքում առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 13 անվճար և 1 վճարովի հիմունքներով ասպիրանտ: Հեռակա ուսուցմամբ՝ 10 անվճար և 2 վճարովի հիմունքներով ասպիրանտ:

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 107 ասպիրանտ (47-ը՝ առկա, 60-ը՝ հեռակա), վճարովի հիմունքներով՝ 4 արտերկրացի ասպիրանտ: Հայցորդների թիվը 200 է. 75-ը՝ վճարովի, 125-ն՝ անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 46 ասպիրանտ (28-ը՝ առկա, 16-ը՝ հեռակա), որից 2-ը՝ վճարովի հիմունքներով (արտերկրացի ասպիրանտ): 2019 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 26 ասպիրանտ, որից 13 առկա, 10 հեռակա 3-ը՝ վճարովի հիմունքներով:

Առ 01.01. 2020 թ.՝ պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 95 է, 32-ը առկա, 57-ը հեռակա և 6-ը՝ վճարովի հիմունքներով, որից 3-ը արտերկրի քաղաքացի է: Հայցորդների թիվը 176 է. 75-ը սովորում է վճարովի, 101-ը՝ անվճար հիմունքներով (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են զարնանային և աշնանային դասընթացներ “Մասնագիտական օտար լեզու” (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), “Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ” և “Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն” առարկաներից:

